

Ճշդե՛ կարգը հետևեալ բառերուն եւ կազմէ նախադասութիւն մը:



Ա- լեցուն - նուերներով - Սենեակը - Է:
 :՛ջ դրանք իսկզուստը միտքովը :դուրստուտու

Բ- կը - երկնքին - Արեւը - փայլի - մէջ:
 :՛ձր դվժղիմք վրոփ մի միջմի :դուրստուտու


Գ- աջ - Ձուկը - նետուի - ձախ - կը - ու:
 :վստզղ մի ոլմօ րս ճո միսջ :դուրստուտու




Պատկերին համաձայն գիծերը տուագեցնելով ընտրե՛ ճիշդ պատասխանը:




Բազմապատկե՛ վարի նշուած թիւերը, ապա ներկե՛ պատասխանները ճշդուած գոյներուն համաձայն:



- Կապոյտ 2X5
- Գոց կանաչ 2X7
- Բաց կանաչ 2X6
- Կարմիր 2X3
- Սեւ 2X8
- Դեղին 2X9
- Վարդագոյն 2X2
- Նարնջագոյն 2X4



Ամբողջացո՛ւր պատկերը, ապա ներկե՛ նախասիրած գոյներովդ:




ՅԵՔԻԱԹԱՅԻՆ ԳԻՂԻ ԳԱՂՏՆԻՔԸ

Եթ՞ սառերեն, եթ՞ ձորերեն զմրուխտ դաշտի մեջ գիւղ մը կար: Գիւղացիները բոլորն ալ աշխատասեր ու իրար օգնող էին: Աղքատ, սակայն չափազանց բարի երիտասարդ մը կար: Այս երիտասարդը իր սիրայօժար օգտակար կը դառնար բոլոր գիւղացիներուն: Ան առանձին կ'ապրէր, օրուան հացը հագի կը հաներ, բայց բոլորին սիրով կ'օգնէր:

Այդ բարութենէն բաժին մը հասեր էր նաեւ անտառի փերիին, որուն օգնած էր տղան, առանց գիտակցելու թէ ո՛վ է ան: Անտառի փերին շնորհակալութիւն յայտներ էր անոր ըսելով. «*Քու բարութիւնդ շուտով պիտի վարձատրուի: Դուն պիտի հանդիպիս ու ամուսնանաս բարի աղջկայ մը հետ: Ձեզմէ աղջիկ մը պիտի ծնի, որուն կնքամայրը ես պիտի ըլլամ*»:

Ինչպէս ըսած էր փերին, տղան շուտով ամուսնացաւ իր նման բարի ու կամեցող աղջկայ մը հետ: Որոշ ժամանակ մը վերջ ծնաւ անոնց աղջիկը: Բոլորը հիացած էին նորածինի գեղեցկութեամբ: Անոր այտերը կարմիր խնձորներու կը նմանէին, մաշկը՝ ճերմակ - ճերմակ ինչպէս Արարատի ձիւնը, իսկ աչքերը՝ կապոյտ երկինքն էր որ կը յիշեցներ:

Եկաւ աղջկան կնքելու ժամանակը: Ամբողջ գիւղը հաւաքուեր էր կիսելու բարի համագիւղացիին ուրախութիւնը: Երբ բոլորը հաւաքուեր էին, շուտով բարի փերին եկաւ եւ բոլորին ողջունելէ ետք յայտնեց իր բարեմաղթութիւնները ըսելով. «*Ան պիտի ըլլայ չքնաղ ու*



բարձրահասակ՝ ինչպէս Նայիրեան դալար բարտին: Անոր ոտնահետքերուն մէջ վարդ ու մանուշակ պիտի ծաղկին, երբ ուրախանայ այդ օրը աւելի պիտի պայծառանայ, իսկ երբ տխրի անձրեւ պիտի տեղայ: Երբ ան պիտի սկսի խօսիլ մայրենի լեզուով, անոր բերնէն մարգարիտ ու անգին քարեր պիտի թափին»: Ապա բարի փերին անհետացաւ, իսկ գիւղացիները ուրախութեան խրախճանքը շարունակեցին:

Աղջիկը օրէ օր կը մեծնար, իսկ գիւղացիները ուրախութեամբ կը դիտէին գայն, հաստատելով որ իրականացեր են անտառի փերիին ցանկութիւնները: Անոնք ուրախ էին, որովհետեւ թէ՛ ամռան, թէ՛ ձմռան անոնց տուներէն վարդ ու մանուշակ կը բուրէին, իսկ աղջկան բերնէն թափած մարգարիտներն ու անգին քարերը կ'օգտագործէին բոլոր կարիքաւորները:

Կարճ ժամանակ անց, գիւղը դարձաւ զմրուխտ դաշտավայրի ամենաուրախ եւ ամենահարուստ գիւղը: Բոլորը կը փորձէին գիւղացիներուն նմանիլ: Անոնք կը հարցնէին, թէ ի՛նչ է իրենց երջանկութեան բանալին.

-Եղէ՞ք բարի ու կամեցող, կ'ունենաք ամեն ինչ: Բարութիւնն ու կամեցողութիւնը ձեզմէ իւրաքանչիւրին երջանիկ կը դարձնեն:

Զեքիաթը այնտեղ, իսկ մենք այստեղ: Զետեւինք հեքիաթի խորհուրդներուն եւ բարութիւն սերմանէնք ամենուր, որ ծաղկի ու գեղեցկանայ մեր ջքնաղ երկիր ՅԱՅԱՍՏԱՆԸ:

ԵՐԱՉՆԵՐԸ...

Ի՞նչ են երազները եւ արդեօ՞ք որեւէ նշանակութիւն ունին: Այս երկու հարցումները անընդհատ կ'ուղղուին ու կ'արժարժուին մարդոց կողմէ:

Երազները պատմութիւններ են, զորս մարդիկ կը հնարեն, կը դիտեն եւ անոնց կը մասնակցին քնանալու ընթացքին: Երազները երեւակայական են անշուշտ, բայց երազողին համար իրական կը թուին: Արթուն ըլլանք թէ քնացած, մեր ուղեղը անընդհատ ուղեղային էլեկտրոնային ալիքներ կ'արտադրէ, որոնք միայն գիտնականներու կողմէ կարելի կ'ըլլայ չափել:

Քունի ընթացքին կան երկու տեսակ ալիքներ: Մեծ ու դանդաղ եւ պզտիկ ու արագ ալիքներ: Երբ պզտիկ եւ արագ ալիքները յառաջանան, քնացող անձին կոպերը արագ կը շարժին: Այս փուլը կը կոչուի աչքի արագ շարժման հանգրուան, որ մէկ գիշերուան ընթացքին կրնայ կրկնուիլ երեքէն հինգ անգամ: Երբ առտու արթննանք եւ յիշենք մեր տեսած երազները, մեզի այնպէս կը թուի, որ անոնք ժամեր երկարեցան: Իրականութիւնը այդպէս չէ սակայն, աչքի արագ շարժումին հանգրուանը հինգ վայրկեանէն կէս ժամ կը տեւէ:

